ԱՆԹԵՎ ԹՌՉՆԻԿ Է ԱՇՈՒՂԸ

(ԱՇՈՒՂԸ)





Անթև թռչնիկ է աշուղը –
Այսօր այստեղ, վաղը այլ տեղ.
Դարձող ճախրիկ է աշուղը,
Այսօր այստեղ, վաղը այլ տեղ:

Մերթ անսվաղ, ծարավ, պապակ,
Մերթ անհաջող, մերթ հաջողակ.
Թափառում է նա շարունակ,
Այսօր այստեղ, վաղը այլ տեղ:

Մի տեսակ լուսատրտիկ է,
Լուր տարածող մունետիկ է.
Հողմից հալածված ամպիկ է,
Այսօր այստեղ, վաղը այլ տեղ:

Ջուր հույսերով խարխափում է,
Գեղեր, քաղաքներ չափում է.
Կայծակի նման խփում է,
Այսօր այստեղ, վաղը այլ տեղ:

Ձիվա՛ն, մի տեղ դադար չունի,
Մեղվի պես միշտ կը թռչկոտի.
Այս ընթացքով պիտի մեռնի,
Գուցե այստեղ, գուցե այլ տեղ:

1902